Երբ վասակը գնահատվում է

Կան գիտնականներ, որոնց վասակն անուրանալի է մեր երկրի կրթության ու գիտության զարգացման գործում ընդհանրապես, Երեւանի պետական համալսարանի կյանքում մասնավորապես:

Ռադիկ Մարիրոսյանի գիտական ուղու ուրվագծման եւ որոնես գիտական կայացման գործով կատեւոր դեր է խաղացել նրա ուսումնառությունը ԽՍՀՄ ԳԱ Պ. Ն. Լեբեդեւի անվան ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրայում (1961-1964 թթ.)՝ ակնավոր գիտնական, Նոբելյան մրցանակի դափնեկիր, ակադեմիկոս Ա. Մ. Պրոխորովի ղեկավարությամբ: Այնտեղ սանալով գիտական առաջին մկրտությունը՝ դեցիմետրային տիրույթի էվանային ուժեղացուցիչների ստեղծման բնագավառում նա կատարել է մի շարք հետազոտություններ: Առանձնահատուկ հիշատակման է արժանի այն իրողությունը, որ ռադիոաստղագիտության մեջ առաջին անգամ կիրառվել է Ռ. Մարիրոսյանի մշակած՝ 21 սմ ալիքի երկարությամբ լայնաբերտ երկդեղանտային էվանային ուժեղացուցիչը: Նրա խորը գիտելիքները եւ հետաքրքրությունների լայն շրջանակը, բազմակողմանի գործունեությունը, կազմակերպչական տաղանդը գիտնականին հնարավորություն տվեցին ոչ այնքան երկար ժամանակահատվածում հասնելու մինչեւ ակադեմիկոսի աստիճանի, Հայաստանում ստեղծելու համաբխարհային ճանաչում ստացած ռադիոֆիզիկայի դպրոց:

1958 թ. ավարտելով ԵՊՀ ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետը՝ նա մասնագիտական աշխատանքային կենսագրությունը սկսել է ՀԽՍՀ ԳԱ Բյուրականի աստղադիտարանում, այնուհետեւ տեղափոխվել է ՀԽՍՀ ԳԱ Նորաստեղծ Ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտ՝ նախ որպես գիտաշխատող, ապա՝ լաբորատորիայի վարիչ, այնուհետեւ՝ գիտական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, իսկ 1980-2006 թվականներին՝ գիտահետազոտական ոլորտում իր դերով հայտնի այդ հիմնարկության տնօրեն: 1964 թ. Ռ. Մարիրոսյանը պաշտպանել է թեկնածուական, իսկ 1980 թ.՝ դոկտորական ատենախոսություն՝ նվիրված էվանային ուժեղացուցիչների կիրառությանն ու արդյունավետության բարձրացմանը: Նա հեղինակ է երեք արժեքավոր մենագրությունների եւ 200-ից ավելի գիտական հոդվածների:

Մեծ է Ռ. Մարիրոսյանի ներդումը ռադիոաստղագիտական հետազոտություններում էվանային ուժեղացուցիչների ստեղծման եւ տարբեր ալիքային տիրույթների՝ էվանային ուժեղացման ֆիզիկական հիմունքների մշակման բնագավառներում: Առաջին անգամ նա է առաջարկել եւ ուսումնասիրել մակադակների շրջման սխեման, որը թույլ է տալիս միաժամանակ ուժեղացնել տարբեր հաճախությունների երկու ազդանշան: Բարձր զգայունության ընդունիչ համակարգերի մշակման եւ ներդման ուղղությամբ իրականացած աշխատանքների հետ 1988 թ. Ռ. Մարիրոսյանը գիտության եւ տեխնիկայի բնագավառում արժանացել է Հայաստանի պետական մրցանակի, իսկ միլիմետրական տիրույթում էվանային ուժեղացման հիմունքներին նվիրված հիմնարար հետազոտությունների համար 1989 թ. գիտության եւ տեխնիկայի բնագավառում նրան շնորհվել է նաեւ Ուկրաինայի պետական մրցանակ:

Աշխատելով ՀՀ ԳԱԱ-ում եւ ԵՊՀ-ում՝ Ռ. Մարիրոսյանն առանձնահատուկ կարեւորել է միջազգային համագործակցությունը: 25 տարուց ավելի նա ղեկավարել է Հայաստանի ԳԱ Ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտը, երկար տարիների ընթացքում սերտորեն համագործակցել ՈԴԳԱ Ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտի հետ: Բեղմնավոր էր վերոհիշյալ համագործակցությունը հատկապես երկրի ներին պաշտպանության ուսումնասիրությանը նվիրված «Ինտերկոսմոս» ծրագրերի շրջանակներում: Ռ. Մարիրոսյանի գիտական ղեկավարությամբ Ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտում ստեղծված գերբարձր հաճախային ռադիոմետրական սարքավորումները՝ բարձր զգայունության ռադիոընդունիչ սարքերը, լայնորեն կիրառվել են բնական պաշարների հետազոտման «Պրիրոդա» եւ «Օկեան» միջազգային գիտական ծրագրերում, ինչպես նաեւ ռադիոաստղագիտական եւ բժշկաբնաբանական հետազոտություններում: Բավականաչափ արդյունավետ է եղել նրա մասնակցությունը տիեզերական տարածության ուսումնասիրություններին նվիրված ծրագրերին: Ռ. Մարիրոսյանի ղեկավարությամբ ստեղծված սարքավորումները հաջողությամբ օգտագործվել են տիեզերագնաց սարքերում: Մասնավորապես նրա անմիջական ղեկավարությամբ ստեղծված սարքավորումների օգնությամբ Վեներայի մթնոլորտում գործող աերոգնոդերի հետազոտը մեծ ճշգրտությամբ չափելու հնարավորություն է ընձեռվել:

Տիեզերի հետազոտման ուղղությամբ կատարված այդ աշխատանքների համար ԽՍՀՄ տիեզերագնացության Ֆեդերացիայի բյուրոյի նախագահության որոշմամբ նա 1987 թ. արժանացել է նաեւ 3ու. Ա. Գագարինի անվան ոսկե հուշամեդալի:

Այս ամենին զուգահեռ՝ ՀԳԱ Ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտում էվանային ուժեղացուցիչների ստեղծման եւ տարբեր ալիքային տիրույթների էվանային ուժեղացման ֆիզիկական հիմունքների մշակման բնագավառում Ռ. Մարիրոսյանը հինգարդեց գիտական նոր ուղղություն՝ առաջինը հայտնաբերելով էներգետիկ մակադակների գերբնակեցման նոր սխեմաներ, որոնք հնարավորություն են տալիս միաժամանակ ուժեղացնելու տարբեր հաճախությունների երկու ազդանշաններ: Նրա ղեկավարությամբ մշակված ալիքսայային էվանային ուժեղացուցիչը հաջողությամբ օգտագործվել է երկրի ամենամեծ՝ ՌԱՏԱՆ-600 ռադիոդիտակում, որը 14 անգամ բարձրացրել է ընդունիչ համակարգի զգայունությունը:

Ռ. Մարիրոսյանի ղեկավարությամբ կատարված գիտական մշակումները լայն ճանաչում ունեն ԱՊԳ եւ արտասահմանյան երկրներում, որոնց գիտական մի շարք կենտրոններ հետ կնքվել են համաձայնագրեր, եւ համատեղ կատարվում են արդյունավետ հետազոտություններ:

Ռ. Մարիրոսյանի՝ որպես գիտության կազմակերպչի գործունեության մյուս ուղղությունը կատարված հետազոտությունների արդյունքները ստեղծության մեջ մերդնելն է: Նրա անմիջական ղեկավարությամբ Գորիսում հիմնված գործարանն արտադրում է անկյան թվային փոխակերպիչներ, որոնք լայն կիրառություն ունեն ժողտնտեսության տարբեր բնագավառներում: 1988 թ.՝ այն ժամանակ դեռեւս ԼՂԻՄ-ի մարզկենտրոն Ստեփանակերտում եւս կազմակերպվել է Ռ. Մարիրոսյանի ղեկավարած ինստիտուտի գիտահետազոտական բաժին, որեղ աշխատում են նաեւ Երեւանից գործուղված մասնագետներ: Այդ բաժնի



նակ ուժեղացնելու տարբեր հաճախությունների երկու ազդանշաններ: Նրա ղեկավարությամբ մշակված ալիքսայային էվանային ուժեղացուցիչը հաջողությամբ օգտագործվել է երկրի ամենամեծ՝ ՌԱՏԱՆ-600 ռադիոդիտակում, որը 14 անգամ բարձրացրել է ընդունիչ համակարգի զգայունությունը:

Ռ. Մարիրոսյանի ղեկավարությամբ կատարված գիտական մշակումները լայն ճանաչում ունեն ԱՊԳ եւ արտասահմանյան երկրներում, որոնց գիտական մի շարք կենտրոններ հետ կնքվել են համաձայնագրեր, եւ համատեղ կատարվում են արդյունավետ հետազոտություններ:

Ռ. Մարիրոսյանի՝ որպես գիտության կազմակերպչի գործունեության մյուս ուղղությունը կատարված հետազոտությունների արդյունքները ստեղծության մեջ մերդնելն է: Նրա անմիջական ղեկավարությամբ Գորիսում հիմնված գործարանն արտադրում է անկյան թվային փոխակերպիչներ, որոնք լայն կիրառություն ունեն ժողտնտեսության տարբեր բնագավառներում: 1988 թ.՝ այն ժամանակ դեռեւս ԼՂԻՄ-ի մարզկենտրոն Ստեփանակերտում եւս կազմակերպվել է Ռ. Մարիրոսյանի ղեկավարած ինստիտուտի գիտահետազոտական բաժին, որեղ աշխատում են նաեւ Երեւանից գործուղված մասնագետներ: Այդ բաժնի ներդումը մեծ է հասկանալ ռազմական տեխնիկայի բարդ համակարգերի վերանորոգման գործում, ինչը ժամանակին այնքան անհրաժեշտ էր Արցախի հիմնաաշտանական մարտերի ընթացքում:

Արժեքավոր է Ռադիկ Մարիրոսյանի ներդումը նաեւ բարձրագույն կրթության զարգացման գործում: 1965 թ-ից ի վեր նա դասավանդում է ԵՊՀ-ում, ընդհանուր եւ հատուկ դասընթացներ է վարում Ռադիոֆիզիկայի ֆակուլտետում: Նրա նախաձեռնությամբ 1983 թ. այդ ֆակուլտետում կազմակերպվել է Գերբարձր հաճախությունների ռադիոֆիզիկայի ամբիոնը, որը որոշ ընդմիջումով (1986-2006 թթ.) ղեկավարում է նույնը: Ռ. Մարիրոսյանի ղեկավարությամբ երիսասարդ մի շարք գիտնականներ պաշտպանել են դոկտորական եւ թեկնածուական ատենախոսություններ: Նա ֆիզիկայի մասնագիտությամբ մի շարք ուղղություններով ԵՊՀ եւ ՀՀ ԳԱԱ դոկտորական ու թեկնածուական ատենախոսությունների պաշտպանության մասնագիտական խորհրդի նախագահն է, գիտական պարբերականների խմբագական խորհուրդների անդամ, ՀՀ ԳԱԱ «Տեխնիկական գիտություններ» հանդեսի գլխավոր խմբագիրը, բազմաթիվ գիտաժողովների ու կոնֆերանսների ակտիվ մասնակիցն ու կազմակերպիչը:

1993-2006 թթ. ակադեմիկոս Ռ. Մարիրոսյանը ղեկավարել է ԵՊՀ-ն: Այդ ընթացում գիտնական-մանկավարժի նրա հմտություններին զուգակցվել են նաեւ եռանդուն կազմակերպչի ունակություններ: Նրա նախաձեռնությամբ ԵՊՀ-ում իրականացվել են ուսումնակրթական ու գիտամշակութային առաջընթացին մղված բազմաթիվ ծրագրեր: Այդ առումով առաջին կարեւոր ձեռնարկումը, թերեւս, ԵՊՀ-ին առնչվող օրենսդրության նախագծի վերանայումն էր, որն ի վերջո ՀՀ Կառավարության կողմից հաստատվեց 1996 թ.: Նրա որոշմամբ ԵՊՀ-ում բացվել են նոր ֆակուլտետներ (աստվածաբանության, միջազգային հարաբերությունների, ժուռնալիստիկայի, սոցիոլոգիայի), մի շարք մասնագիտություններ (ֆարմացիա, հոգեբանություն, արվեստաբանություն եւ այլն): Համալսարանական կառույցի ընդլայնման կարեւորագույն իրողություններից էր նաեւ 1994 թ. սեպտեմբերին ՀՀ Կառավարության որոշմամբ Իջեւան քաղաքում ԵՊՀ-ի մասնաճյուղի հիմնադրումը: Նրա ջանքերով եւ ստեղծվել նաեւ «ԵՊՀ շրջանակարտերի միավորում» ՀԿ-ն, «ԵՊՀ բարեկամների միությունը» եւ հասարակական-մշակութային այլ կազմակերպություններ:

Ռ. Մարիրոսյանի պաշտոնավարման ընթացքում ԵՊՀ-ում խոշոր քայլեր են արվել նաեւ միջազգային չափանիշներին համապատասխան համալսարանական կրթություն ու գիտություն ապահովելու համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ստեղծման ուղղությամբ: Բուհը հնարավորինս ապահովվել է ժամանակակից տեխնիկայով ու սարքավորումներով, համակարգչային ցանցով, ուսումնամեթոդական գրականությամբ: Կատարվել են շինարարական ու վերանորոգման լայնածավալ աշխատանքներ: Մեծ է Ռ. Մարիրոսյանի ներդումը նաեւ միջազգային գիտակրթական եւ մշակութային կառույցների հետ ԵՊՀ-ի արդյունավետ համագործակցության բնագավառում: Տարիներ շարունակ նա եղել է համալսարանների միջազգային եւ համաեվրոպական ընկերակցությունների խորհուրդների լիիրավ անդամ, Հայաստանի պետական բուհերի ռեկտորների խորհրդի նախագահ՝ միջազգային համագործակցության ասպարեզում ակտիվ գործունեության եւ հաջողությունների համար 1998 թ-ին արժանանալով Համալսարանների նախագահների միջազգային ընկերակցության պատվոգրին:

Արդյունավետ է անվանի գիտնականի գործունեությունը նաեւ ՀՀ ԳԱԱ նախագահի պատճառով:

Հայրենական բարձրագույն կրթությանն ու գիտությանը մատուցած նշանակալից ծառայություններ, ինչպես նաեւ հասարակական ակտիվ գործունեության համար ակադեմիկոսն արժանացել է բազմաթիվ մրցանակների, մեդալների ու շքանշանների, պատվոգրերի ու շնորհակալագրերի: Նա պարգեւատրվել է «Սուրբ Մեսրոպ Մաշտոց», «Հոկտեմբերյան հեղափոխություն» եւ «Պատվո նշան» շքանշաններով, գիտական ուսումնասիրությունների եւ բարձրագույն կրթության բնագավառում ձեռքբերած բացառիկ նվաճումների համար ԵՊՀ մեդալով: Անտարակույս, շնորհված բոլոր պարգեւներն ու կոչումները գիտնականի վաստակի արժանի գնահատականներն են, որոնք նաեւ պարապարեցնող ու եռանդուն գործունեության խթան են:

Սամ ՍԻՄՈՆՅԱՆ
ԵՊՀ ռեկտորի պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր
Յուրի ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր